

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

18.01.2013թ.

1

Արմավիրի մարզի Արտաշար համայնքի ղեկավարի 2012թվականի երկրորդ կիսամյակի աշխատանքային գործունեության

Գ.ԱՐՏԱՇԱՐ

Հաշվետու ժողովին մասնակցում էին ավագանու անդամները, գյուղապետարանի աշխատակիցները, դպրոցի տնօրենը, համայնքի բնակիչները և մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ. Կարապետյանը:

Ձեկույցով հանդես եկավ համայնքի ղեկավար Մ. Օհանյանը, որը ներկայացրեց 2012 թվականի երկրորդ կիսամյակում իր կողմից կատարված աշխատանքները: Նաև նշեմ, որ 2012թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում ավագանին հրավիրել է 6 նիստեր, որի ընթացքում քննարկվել են համայնքին հուզող հարցեր, որոնց վերաբերյալ ընդունված որոշումների մասին իրազեկվել է համայնքի բնակչությանը: Գյուղապետարանը ստացել է 36 շրջաբերական, ուղարկել 48 գրություն և քաղաքացիներին է տրամադրել 206 տեղեկանք:

1. Գյուղատնտեսության բնագավառ.

2012թվականի երկրորդ կիսամյակում ըստ մշակաբույսերի բերքատվությունը եղել է միջին և բարձր, գյուղացիական տնտեսությունների ստացաց բերքը իրացնելու և բերքի կուրուստը նվազեցնելու նպատակով տարբեր մթերոդ կազմակերպությունների հետ տարվել են բանակցություններ բերքի մթերումը ժամանակին կատարելու համար: Ոռոգման ջրի սակավ պայմաններում ջրային ընկերության հետ համատեղ ձեռնարկվել են բոլոր միջոցները հողօգտագործողներին առավելագույնս ոռոգման ջրով ապահովելու համար: Կատարվել է 11.5 հա. աշնանացան ցորենի ցանքս: Գյուղապետարանը ձեռնարկում է բոլոր միջոցները գյուղում գյուղատնտեսության զարգացնելու համար:

2. Կենցաղ սպասարկման բնագավառ.

2012թ. երկրորդ կիսամյակում տնտեսությունների կենցաղային պայմանները բարելավելու նպատակով կատարվել է խմելու ջրի անխափան մատակարարում միջինը 8 ժամյա աշխատանքային ռեժիմով, գյուղապետարանի և սանէպիդ կայանի կնքած պայմանագրի համաձայն պարբերաբար խմելու ջուրը ենթարկվել է ստուգումների և կատարվել ախտահանման աշխատանքներ, փողոցներից մեկում կառուցվել է 950 գծամետր նոր ջրագծի և 22 ընտանիք ունի խմելու ջուր: Կառուցվել է 700 գծամետր նոր գազատար գիծ և 10 ընտանիք ունի հնարավորություն բնական գազից օգտվելու և համայնքը ամբողջությամբ գազաֆիկացված է: Կատարվել է աղբահանության աշխատանքներ ամիսը 4 անգամ և համայնքում աղբի կուտակումներ չկան, նաև կատարվել է ծանապարների խճապատում և հարթեցում:

3. Մշակույթի և սպորտի բնագավառ.

Համայնքում գործում է սպորտային խմբակ և գյուղապետարանի աջակցությամբ մասնակցում են տարբեր մրցաշարների և ունենք հաջողություններ ,տարվում են աշխատանքներ սպորտը զարգացնելու ուղղությամբ: Գյուղապետարանը սերտ համագործակցում է դպրոցի հետ, կազմակերպում է միջոցառումներ և միջոցառման մասնակից երեխաներին հանձնվում է նվերներ:

4. Սոցիալական բնագավառ.

Գյուղապետարանի անմիջական ուշադրության կենտրոնում են սոցիալապես անապահով ընտանիքները, հաշմանդամները և թոշակառուները: 2012թ. երկրորդ կիսամյակում սոցիալապես անապահով 11 ընտանիք դիմել է դրամական օգնության խնդրանքով և գյուղապետարանը չըմերժելով նրանց խնդրանքը տվել է դրամական օգնություն: Գյուղապետարանի քանքերի շնորհիվ « Դիակոնյա» բարեգործական կազմակերպության կողմից 51 ընտանիք անսական մեկ փաթեթ ութ կիլոգրամ տարողությամբ սննդամթերք է ստանում,սոցիալապես անապահով 14 ընտանիք ստանում են ընտանեկան նպաստ,տարվում է աշխատանքներ բոլոր ուղղություններով գյուղի սոցիալական վիճակը բարելավելու նպատակով:

5. Համայնքի հիմնախնդիրները

- 1.Խմելաջրի ցանցի նորացում
- 2.Ծանապարների ասվալտապատում
- 3.Մշակույթի տան վերանորոգում
- 4.Մանկապարտեզի շենքի կառուցում
- 5.Գյուղապետարանի շենքի կառուցում

Արտաշարի գյուղապետարանը աշխատավարձի,սոց վճարումների և այլ ծառայությունների հետ կապված պարտքեր չունի:

Արտաշար համայնքի բնակիչները գյուղապետ Մ.Օհանյանի գլխավորությամբ իրենց խորին երախտագիտություն են հայտնում Արմավիրի մարզպետ պարոն Ա.Ղահրամանյանին խնդրելով ուշադրություն դարձնել համայնքի հիմնախնդիրներին:

Արտաշար համայնքի
ղեկավար՝  Մ.Օհանյան



15.ՅՈՒՆԿԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆ
ԳՅՈՒՂ ԱՐՏԱՇԱՐ